ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՕՁՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

1731, Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 6, շենք 10, հեռ. (0253) 6-16-62,
Վեբ-կայք: http://www.odzun.am , Skype: odzun.lori, Էլ. փոստ: odzun.lori@mta.gov.am (odzun@bk.ru)

*թիվ 462-16*
*22 դեկտեմբերի, 2016թ.*

*ՀՀ Լոռու մարզպետ*
*Պարոն Ա. Նալբանդյանին*

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու կողմից 2016 թվականի դեկտեմբերի 22-ին կայացված արտահերթ նիստի ժամանակ ընդունված որոշումները (N 59-ից N64 որոշումները):

Առդիր՝ 43 թերթ:

*Հարգանքով՝*
*Օձուն համայնքի ղեկավար* *Ա. Տիտանյան*

Կատարող՝ Վ. Զավարյան
հեռ. 0253-6-16-62

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

# ՈՐՈՇՈՒՄ

**22 դեկտեմբերի 2016 թվական, N 59-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի վեցերորդ պարբերության, 12-րդ, $12^{1}$ և 14-րդ հոդվածների՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Օձուն համայնքի նորընտիր ավագանու 2016 թվականի երկրորդ արտահերթ նիստի օրակարգը.

1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

2) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ.

3) ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

4) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0059-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

5) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (5) Դեմ ( չկա ) Ձեռնպահ ( չկա )

Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Հ. ՉՈԲԱՆՅԱՆ
Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2016թ., դեկտեմբերի 22**
**Գ. Օձուն**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**22 դեկտեմբերի 2016 թվական, N 60-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետ, 54.1 հոդվածի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի, հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքում տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, հասարակական կազմակերպությունների, միավորումների, հանրության մասնակցությունն ու իրազեկումը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը ապահովելու նպատակով.

1) ստեղծել Օձուն համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) խորհուրդ՝ հաստատել խորհրդի անհատական և քանակական կազմը՝ համաձայն Հավելված 1-ի:

2) ստեղծել Օձուն համայնքի ղեկավարին կից համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների խորհուրդ՝ հաստատել խորհրդի անհատական և քանակական կազմը՝ համաձայն Հավելված 2-ի:

3) ստեղծել Օձուն համայնքի ղեկավարին կից համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների խորհուրդ՝ հաստատել խորհրդի անհատական և քանակական կազմը՝ համաձայն Հավելված 3-ի:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմիններին՝ գործունեությունն իրականացնել օրենքներին և այլ իրավական ակտերին, ինչպես նաև Օձուն համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 11-ի «ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 47-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Օձուն համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 1-ի «ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 61-Ա, Օձուն համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 11-ի «ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 49-Ա և Օձուն համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 11-ի «ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 50-Ա որոշումները:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**Կողմ (5)** **Դեմ ( չկա )** **Ձեռնպահ ( չկա )**

Ա. ԱՊՐԵՍՅԱՆ

Դ. ԴԱՎԹՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

**2016թ., դեկտեմբերի 22**
**Գ. Օձուն**

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 60-Ա որոշման

# ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ (ԿԱԶՄՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ (ԿԱՏԱՐՄԱՆ) ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ) ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ

1. ԱՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ *համայնքի ղեկավարի տեղակալ, խորհրդի նախագահ,*
2. ՆԱԻՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ *աշխատակազմի գլխավոր մասնագետ, խորհրդի քարտուղար*
3. ԳԱԳԻԿ ԹՈՐՈՍՅԱՆ *ավագանու անդամ, խորհրդի անդամ* ***(համաձայնությամբ)***
4. ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ *ավագանու անդամ, խորհրդի անդամ* ***(համաձայնությամբ)***
5. ՍՈՒՐԵՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ* ***(համաձայնությամբ)***
6. ԱՆԱՀԻՏ ԱՂԻԿՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ* ***(համաձայնությամբ)***
7. ՕՖԵԼՅԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ* ***(համաձայնությամբ)***
8. ՍԵՐԳԵՅ ԽԱՆՎԵԼՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ* ***(համաձայնությամբ)***
9. ԷԴԻԿ ՉՈԲԱՆՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ* ***(համաձայնությամբ)***

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

*Հավելված 2*
*ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու*
*2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 60-Ա որոշման*

# ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ, ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԾՐԱԳՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ

1. ԱՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ *համայնքի ղեկավարի տեղակալ, խորհրդի նախագահ,*
2. ՆԱԻՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ *աշխատակազմի գլխավոր մասնագետ, խորհրդի քարտուղար*
3. ԱԲԵԼ ՏԻՏԱՆՅԱՆ *ավագանու անդամ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
4. ԴԱՎԻԹ ԲՈՇՅԱՆ *ավագանու անդամ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
5. ՍԻՄՈՆ ՓԵՐԻԽԱՆՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
6. ԳԱԳԻԿ ԴԱՎԹՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
7. ԱՇՈՏ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
8. ՍՈՒՐԵՆ ԴԱՎԹՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
9. ՍԱՀԱԿ ՏԻՏԱՆՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

*Հավելված 3*
*ՀՀ Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու*
*2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 60-Ա որոշման*

## ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄ

1. ԱՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ *համայնքի ղեկավարի տեղակալ, խորհրդի նախագահ,*
2. ՆԱԻՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ *աշխատակազմի գլխավոր մասնագետ, խորհրդի քարտուղար*
3. ԱՇՈՏ ՋԱՎԱՐՅԱՆ *ավագանու անդամ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
4. ԱՐՇԱԿ ՓԵՐԻԽԱՆՅԱՆ *ավագանու անդամ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
5. ԴՈՆԱՐԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
6. ՎԱՀԱԳՆ ՓԱՐԵՄՈՒԶՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
7. ԱՇՈՏ ՄԱԿԻՉՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
8. ՍԱՐԳԻՍ ԴԱՎԹՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***
9. ԱՐՍԵՆ ՂԱՐԻԲՅԱՆ *համայնքի բնակիչ, խորհրդի անդամ **(համաձայնությամբ)***

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**22 դեկտեմբերի 2016 թվական, N 61-Ն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ կետի, 53-րդ հոդվածի, հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը և նրա կողմից ներկայացված իրավական ակտի նախագիծը՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

Ելնելով ռազմավարական կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծման և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացման կարևորությունից.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Օձուն համայնքի ղեկավարին՝ սույն որոշման նկատմամբ իրականացնել հսկողություն և ապահովել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրով» նախատեսված ծրագրերի իրագործումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (5) Դեմ ( չկա ) Ձեռնպահ ( չկա )

Ա. ԱՊՐԵՍՅԱՆ

Դ. ԴԱՎԹՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., դեկտեմբերի 22
Գ. Օձուն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**22 դեկտեմբերի 2016 թվական, N 62-Ն**

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի երրորդ կետի, 54-րդ հոդվածի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1.Կատարել փոփոխություններ Օձուն համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 10-ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ>> N 47-Ն որոշման մեջ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (5) Դեմ ( չկա ) Ձեռնպահ ( չկա )

Ա. ԱՊՐԵՍՅԱՆ
Դ. ԴԱՎԹՅԱՆ
Գ. ԹՈՐՈՍՅԱՆ
Հ. ՉՈԲԱՆՅԱՆ
Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

**ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2016թ., դեկտեմբերի 22
Գ. Օձուն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

**22 դեկտեմբերի 2016 թվական, N 63-Ն**

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0059-0004 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի, 47-րդ և 51-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ, 35-րդ, հոդվածների, 56-րդ հոդվածի առաջին և հինգերորդ մասերի, 61-րդ հոդվածի, 63-րդ հոդվածի, 67-րդ, 68-րդ, 87-րդ, հոդվածների, «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 10-րդ մասի՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

հիմք ընդունելով Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի սեփականութեուն համարվող հողամասերի, շենքերի և շինությունների օտարման ամենամյա ծրագիրը, անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման մասին եզրակացությունը, հողամասի հատակագիծը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման սխեմայով սահմանված նպատակներին համապատասխան և համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման համար, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ Լոռու մարզ, գ. Օձուն, փողոց 4, փակուղի 2, N 4 հասցեում գտնվող, Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0059-0004 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.07846 հեկտար մակերեսով հողամասը և հողամասի վրա առկա 157.65 քառակուսի մետր մակերեսով հասարակական նշանակությն շինությունները (այսուհետև՝ շինություն) օրենսդրությամբ չարգելված նպատակներով օգտագործելու համար՝ հասարակական կառուցապատման նպատակով, հրապարակային սակարկություններով՝ աճուրդով, օտարելու համար տալ համաձայնություն:

1) Աճուրդի մեկնարկային գին սահմանել հինգ հարյուր քսանութ հազար (528 000) ՀՀ դրամ, նախավճարի և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար հինգ հազար (5 000) ՀՀ դրամ:

2. Հողամասը՝ այդ թվում նաև շինությունը չեն գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում,

չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Հողամասի և շինության օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

2) Հողամասը և շինությունը օտարելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսդրությամբ սահմանված այլ սահմանափակումներ չկան, ինչպես նաև համայնքի հողերի օգտագործման սխեմայով այն նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար.

3. Համայնքն իր տարածքում տնտեսական գործունեությունը խթանելու նպատակով իր օտարած հողի նկատմամբ հինգ տարվա ընթացքում ունի առաջնային հետգնման իրավունք հողամասի շուկայական գնով (Համայնքի հողի օտարման դեպքում օտարման պայմանագրում պետք է ամրագրվեն համայնքի հողի առաջնային հետգնման իրավունքը և տնտեսավարող սուբյեկտի կողմից իրականացվող ծրագրի ժամկետները: Պայմանագրի խախտման դեպքում դա կարող է լուծվել դատական կարգով):

1) Անշարժ գույքի օտարումից ստացվող ֆինանսական միջոցներն օգտագործվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ուղղվում են համայնքային բյուջեի ֆոնդային մաս:

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձունի համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կազմակերպել և իրականացնել սույն որոշման առաջին կետով սահմանված հողամասի և շինության աճուրդը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Կողմ (5) | Դեմ ( չկա ) | Ձեռնպահ ( չկա ) |
|---|---|---|

Ա. ԱՊՐԵՍՅԱՆ

Դ. ԴԱՎԹՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., դեկտեմբերի 22
Գ. Օձուն

/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

**22 դեկտեմբերի 2016 թվական, N 64-Ա**

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15–րդ հոդվածի 3–րդ մասի, <<Հողի հարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10–րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշման՝

***Օձուն համայնքի ավագանին որոշում է.***

1. հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները և Օձուն համայնքի ղեկավարի առաջարկությունը, Օձուն համայնքի բնակիչներ Է. Դանիելյանի, Լ. Ասրյանի, Ա. Մոսինյանի, Լ. Հախինյանի, Ռ. Միքայելյանի, Ա. Խեչիկյանի, Ս. Նալբանդյանի նկատմամբ սահմանել գույքահարկի իսկ Ս. Ասրյանի նկատմամբ հողի հարկի գծով արտոնություններ հետևյալ չափերով.

1) Էդիկ Ռահիմի Դանիելյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 18, փակուղի 1, տուն 1, ՀԿՀՀ 13870005) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2016 թվականի գույքահարկի ապառքից ամբողջությամբ՝ 3 800 (երեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և տույժից՝ 120 (մեկ հարյուր քսան) ՀՀ դրամ գումարի չափով.

2) Լևոն Զավենի Ասրյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 13, տուն 56, ՀԿՀՀ Տ0250304) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2016 թվականի գույքահարկի ապառքից ամբողջությամբ՝ 22 500 (քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և տույժից՝ 709 (յոթ հարյուր ինն) ՀՀ դրամ գումարի չափով.

3) Արտաշես Արմենակի Մոսինյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 8, տուն 58, ՀԿՀՀ 13574181) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2013, 2014 և 2015 թվականների գույքահարկի տույժից՝ ընդհանուր 15 404 (տասնհինգ հազար չորս հարյուր չորս) ՀՀ դրամ գումարի չափով.

4) Լևոն Գագիկի Հախինյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 13, տուն 6, ՀԿՀՀ Տ0250162) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2016 թվականի գույքահարկի ապառքից ամբողջությամբ՝ 11 500 (տասնմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և տույժից՝ 362 (երեք հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ գումարի չափով.

5) Ռուբեն Հովհաննեսի Միքայելյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 13, տուն 28, ՀԿՀՀ Տ0250286) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2015 և 2016 թվականների գույքահարկի ապառքներից ամբողջությամբ՝ ընդհանուր 13 800 (տասներեք հազար ութ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և 2015 և 2016 թվականների տույժերից՝ ընդհանուր 3 995 (երեք հազար ինն հարյուր իննիսունհինգ) ՀՀ դրամ գումարի չափով.

6) Արտակ Ալբերտի Խեչիկյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 1, տուն 57, ՀՎՀՀ Տ0250125) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2016 թվականի գույքահարկի ապառքից ամբողջությամբ՝ 6 900 (վեց հազար ինն հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով և 2016 թվականի տույժից՝ 217 (երկու հարյուր տասնյոթ) ՀՀ դրամ գումարի չափով.

7) Սեյրան Յուրիկի Նալբանդյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 5, տուն 45, ՀՎՀՀ Տ0250030) ազատել վերջինիս պատկանող ավտոմեքենայի 2014 և 2015 թվականների գույքահարկի տույժերից ՝ ընդհանուր 146 184 (մեկ հարյուր քառասունվեց հազար մեկ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ գումարի չափով.

8) Սամվել Երվանդի Ասրյանին (հաշվառման հասցե գ. Օձուն, փողոց 1, նրբանցք 1 տուն 11/1, ՀՎՀՀ Տ0250249) ազատել սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.604 հեկտար մակերեսով վարելահողի 2008, 2009, 2010, 2011, 2012 և 2015 թվականների հողի հարկի տույժերից՝ ընդհանուր 5 258 (հինգ հազար երկու հարյուր հիսունութ ) ՀՀ դրամ գումարի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (5) Դեմ ( չկա ) Ձեռնպահ ( չկա )

Ա. ԱՊՐԵՍՅԱՆ

Դ. ԴԱՎԹՅԱՆ

Գ. ԹՈՐՈՍՅԱՆ

Հ. ՉՈԲԱՆՅԱՆ

Ա. ՓԵՐԻԽԱՆՅԱՆ

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2016թ., դեկտեմբերի 22
Գ. Օձուն